

ՀԱՅԱՍՏԱՆ

Քաղաքացիական հասարակության դերակատարները՝
որպես փոփոխությունների կրողներ Հարավային
Կովկասում և Մոլդովայում

2020 - 2022



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը, կարևորելով քաղաքացիական հասարակության և ներառական կառավարման մեխանիզմերը, հնարավորություն է ստեղծում քաղհասարակության դերակատարների համար զարգացնել հմտություններն ու փորձը՝ առավել արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացված «Քաղաքացիական հասարակության դերակատարները՝ որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» տարածաշրջանային ծրագրի շրջանակում «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն Հայաստանում աջակցել է նորաստեղծ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, քաղաքացիական նախաձեռնություններին և սոցիալական ու մշակութային շարժումներին՝ որպես վստահելի դերակատարներ, որոնք առաջ են տանում ժողովրդավարական գործընթացները՝ մասնավորապես մարդու իրավունքների, համայնքային զարգացման և երիտասարդների ներգրավման, ինչպես նաև կրթության բնագավառներում:

Ծրագրի թիմի և հմուտ խորհրդատուների աջակցությամբ՝ Հայաստանում ծրագրի մասնակից 14 ՔՀԿ-ից յուրաքանչյուրը մշակել է իր սեփական ռազմավարական պլանը՝ գծելով իր ուղին, դերը հասարակության մեջ և համակարգային փոփոխությունները, որոնց միտված է ազդել: ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող մասնակիցները հնարավորություն են ունեցել գնահատելու իրենց սեփական կազմակերպական կարողությունները և մասնակցել կարիքահեն վերապատրաստման ծրագրերին, ստանալ մասնագիտական կարծիք ու խորհրդատվություն, մենթորինգ, ինչպես նաև մասնակցել ուսուցողական այցին: Նրանք նաև ամրապնդել են կապերն իրենց համայնքների, աջակիցների և կամավորների հետ, ինչպես նաև կապ հաստատել Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Չեխիայի Հանրապետությունների գործընկերների և հասակակիցների հետ: Մասնակից ՔՀԿ-ները ստացել են նաև դրամաշնորհներ՝ ռազմավարական զարգացման, ինչպես նաև արշավներ իրականացնելու համար:

Հայաստանում «Քաղաքացիական հասարակության դերակատարները՝ որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» ծրագիրն իրականացվել է Եվրոպական միության և Դեմոկրատիայի ազգային հիմնադրամի (NED)-ի ֆինանսավորմամբ: Հայաստանում ծրագրի բյուջեն կազմել է 387,608 եվրոյին համարժեք դրամ, 175,797-ը հատկացվել է արշավային և գործառնական դրամաշնորհներին:

«ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ» ՀԿ

Աջակցություն ՀՀ-ում հարմարեցված ուսումնական նյութերի մշակմանն ու ներդրմանը համընդհանուր ներառական կրթության համակարգում



Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հաճախ բախվում են որակյալ կրթություն ստանալու իրավունքի իրացման խնդրին՝ քանի որ, համաձայն «Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման» ՀԿ-ի կողմից իրականացված դիտարկումների, նրանց կարիքներին անհապատասխան մեթոդների, ուղեցույցների և մի շարք պայմանների բացակայությամբ պայմանավորված՝ երեխաների ֆիզիկական ներկայությունը ուսումնական գործընթացին չի երաշխավորում կրթության լիարժեք հասանելիությունը:

Այդ նպատակով «Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման» ՀԿ-ն իրականացրեց մի արշավ, որի նպատակն է Էսկան փոփոխություններ իրականացնել ներառական կրթության ոլորտում՝ հարմարեցված ուսումնական նյութերի, դրանց կիրառման վերաբերյալ մեթոդական ուղեցույցի ստեղծման և ՀՀ պետական համընդհանուր ներառական կրթական համակարգում ներդրման միջոցով:

Արշավի արդյունքում՝



Մշակվել են «Մաթեմատիկա 1» և «Մայրենի 1» հարմարեցված աշխատանքային գիրք-տետրերը՝ փորձարարական ծրագրի շրջանակում կիրառվելով Հայաստանի թվով 11 դպրոցում և ներդրվելով հիմնական կրթական համակարգում



Իրականացվել են դասընթացներ աշխատանքային գիրք-տետրերի կիրառման և մեթոդական ուղեցույցի վերաբերյալ՝ ՀՀ 11 դպրոցի 85 ուսուցչի և աջակցող մասնագետների համար



Գիրք-տետրերը կիրառվել են 6-ից 9-ը տարեկան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 55 երեխայի կողմից



Անցկացվել են մշտադիտարկման այցեր և հանդիպումներ հեղինակների հետ՝ բարելավելու մեթոդների որակը



Անցկացվել է հարցում ծնողների և ուսուցիչների շրջանում՝ պարզելու դասերի պլանավորման հարցը և երեխաների գոհունակությունը



Մշակվել է գնահատման ստուգաթերթ՝ երեխաների նախնական ակադեմիական գիտելիքները գնահատելու համար

- ✓ Արշավը և իրականացված գործողությունները ներկայացվել են 3 մեդիա հարթակում՝ «Շանթ» հեռուստաընկերություն, «Արմենիա» հեռուստաընկերություն, Հայաստանի հանրային ռադիո

- ✓ Իրականացվել է արշավի և դրա արդյունքների ամփոփման տեղեկատվական հանդիպում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կրթության տեսչական մարմնի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՊՄՀ-ի, [Երևանի թիվ 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն](#)-ի և այլ կառույցների ներկայացուցիչների, ուսուցիչների մասնակցությամբ

Ծրագրի շնորհիվ ստեղծված աշխատանքային գիրք-տետրերի կիրառման վերաբերյալ ուսուցիչների համար նախատեսված մեթոդական ուղեցույցը մշակվել է համապատասխան մասնագետների կողմից և հաստատվել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Բացի այդ, Ծրագրի շրջանակում տպագրվել է 80, ապա Մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից 200 օրինակ և տրամադրվել է արշավի շրջանակում ընտրված դպրոցների, ինչպես նաև մյուս դպրոցների ուսուցիչներին:

«ՆորԱրար կրթական» ՀԿ

Ընթերցանության դասավանդման զարգացում

Չարգացող տնտեսություններում գրագիտությունն ավելին է, քան սահուն կարդալու, հասկանալու և կարճ հայտարարություններ գրելու կարողությունը: Մեծ հաշվով այն ազդում է այնպիսի հիմնական հմտությունների զարգացման վրա, ինչպիսիք են՝ վերլուծելը, սինթեզելը, տեղեկատվությունը քննադատորեն ուսումնասիրելը և ապացույցների հիման վրա եզրակացություններ անելը: Այս բոլոր բարձրակարգ հմտությունները կարևոր են երկրի զարգացման համար, քանի որ երկարաժամկետ հեռանկարում դա որոշում է որակյալ աշխատուժի առկայությունը (ՅՈՒՆԵՍԿՕ, 2000թ.): «Տնտեսական համագործակցություն և զարգացում» կազմակերպության տվյալների համաձայն՝ եթե մինչև 2030 թվականը Հայաստանի 15 տարեկան բոլոր դեռահասներն անցնեն մաթեմատիկայի և ընթերցանության տարրական շեմը, ապա երկրի տնտեսությունը կարող է աճել 293%-ով:



Հաշվի առնելով ընթերցանության հմտությունները զարգացնելու ուսուցիչների կարողությունների բացակայությունը՝ արշավային ծրագիրը միտված է եղել կատարելու նպատակային միջամտություններ միջին դպրոցի 11-ից 15 տարեկան աշակերտներին դասավանդող ուսուցիչների դասավանդման հմտությունների զարգացման ուղղությամբ:

Ծրագրում ընդգրկվել են Լոռու մարզի 7 քաղաքային և 7 գյուղական միջին դպրոցների 19 ուսուցիչ, 1 տնօրեն և 4 փոխտնօրեն, ովքեր առնչվում են առավելագույն խոցելի խմբերի աշակերտների հետ:

Արշավային ծրագրի մասնակից ուսուցիչները ընդգրկվեցին երեխաների ընթերցանության հմտությունները զարգացնելուն ուղղված հետևյալ փուլերից բաղկացած գործընթացին.

- ✓ Ընթերցանության դասավանդման առկա իրավիճակի քննություն ուսուցիչների հետ
- ✓ Ընթերցանության հմտությունների (ըմբռնում և սահունություն) զարգացման, ռազմավարությունների միջազգային փորձի ուսումնասիրություն և դրա տեղայնացում ուսուցիչների կողմից ընտրված ռազմավարությունների կիրառման և գնահատման գործընթացում
- ✓ մենթորական օգնություն ուսուցիչներին և խմբային հանդիպումներ
- ✓ մոնիթորինգ և գնահատում՝ հասկանալու համար ծրագրի արդյունավետությունն ու կիրառելիությունը

Արշավի սկզբում և վերջում անցկացվել էր հարցախույս՝ աշակերտների արագ և վարժ կարդալու վերաբերյալ: Արդյուքնում պարզ դարձավ, որ արշավի վերջում աշակերտներն ավելի վարժ էին կարդում: Նրանք ավելի մոտիվացված էին, ինքնավստահ և ավելի ներգրավված էին դասապրոցեսին, քանի որ շատ հաճելի էր դասընկերների հետ ընթերցանության հմտություններ վարժելը: Բացի այդ հարստացավ նրանց բառապաշարը: «ՆորԱրար կրթական» ՀԿ-ն նպատակ ունի կրկնել այս դասընթացը և ներառել ավելի մեծ թվով դպրոցներ և ուսուցիչներ:

«Սահմանափակ երիտասարդների ներուժի բացահայտում» ՀԿ

Խաղաղաշինական կրթությունը Տավուշում

Կարևորելով կոնֆլիկտի խաղաղ հաղթահարումը, խաղաղության վերաբերյալ երիտասարդների վերաբերմունքային եւ վարքագծային փոփոխությունն ու խաղաղաշինության մասին որակյալ այլընտրանքային բովանդակության ստեղծումը՝ «Սահմանափակ երիտասարդների ներուժի բացահայտում» ՀԿ-ն, համադրելով ուսուցիչների, դպրոցականների և դպրոցների համագործակցայնությունը, իրականացրել է մի շարք աշխատանքներ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել խաղաղաշինության վերաբերյալ գիտելիքահեն մոտեցմանը և երիտասարդների ու կանանց ակտիվ ներգրավվմանը խաղաղաշինության գործընթացներում:



Փորձագետների ու համապատասխան մասնագետների ներգրավվմամբ ստեղծվել է ուսումնառական ձեռնարկ՝ «Խաղաղաշինական կրթություն» անվանմամբ, որը երաշխավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից՝ որպես [ուսումնական նյութ](#): «Խաղաղաշինական կրթություն» ուսումնառական ձեռնարկի ներկայացումն ու փորձարկումը ուսուցիչների շրջանում ապահովելու համար, իրականացվել է նաև Տավուշի մարզի 20 ուսուցչի վերապատրաստում: Գրքերը հասանելի են դարձել դպրոցների համար՝ շնորհիվ ԶՀԿ-ի ակտիվ համագործակցությանը Տավուշի, ինչպես նաև այլ մարզպետարանների կրթության բաժինների աշխատակիցների հետ: Խաղաղաշինությունն աշակերտների եւ երիտասարդների շրջանում խրախուսելու նպատակով՝ ստեղծվել է նաև «Խաղաղություն» հավելվածը, որը հնարավորություն է տալիս ժամանակակից խաղային մեթոդներով խաղաղաշինության մասին սովորել ավելին ու պատասխանել առաջադրված հարցերին:

«Երիտասարդների հնարավորությունների ակումբ» ՀԿ

STOP COVID, START WORKING

Համաճարակային և հետպատերազմյան բարդ ժամանակաշրջանում



Հայաստանի երիտասարդության շրջանում նկատվում էր գործազրկության կտրուկ աճ: Ըստ ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության Չբաղվածության պետական գործակալության տվյալների՝ 2020-2021թ.-ի փետվարի 1-ի դրությամբ Չբաղվածության տարածքային կենտրոններում (ՉՏԿ) հաշվառված գործազուրկների թիվը կազմում է 11.9 հազար երիտասարդ: Եվ հայտնի փաստ է, որ համաճարակից և պատերազմից ամենաշատ տուժած ոլորտներից է HoReCa-ն (ռեստորաններ, սրճարաններ, սննդի ծառայություններ) և տուրիզմը, որտեղ առնվազն 2000 հայ երիտասարդ գործազուրկ են դարձել: Նշված ոլորտի երիտասարդների գործազրկության թիվը կրճատելու նպատակով՝ «Երիտասարդների հնարավորությունների ակումբ» ՀԿ-ն նախաձեռնեց նրանց վերապրոֆիլավորելու արշավ՝ **Stop Covid, Start Working:**

Stop Covid, Start Working արշավի շրջանակում ուսումնասիրվել են երիտասարդների վերապրոֆիլացման տարբեր ուղղություններ և, հաշվի առնելով աշխատաշուկայի առկա պահանջները՝ որոշվել էր ընտրել թվային մարքեթինգը: Նախնական կատարվել է «ՀՀ աշխատաշուկայում թվային մարքեթինգի կրտսեր մասնագետից պահանջվող հիմնական ակնկալիքները» հետազոտություն, որի հիման վրա կազմվել է նաև դասընթացի պլանը: Դասընթացին կարող էին մասնակցել 16-30 տարեկան նշված ոլորտների ՀՀ այն երիտասարդները, որոնք գործազուրկ են դարձել համավարակի կամ պատերազմի հետևանքով: Արշավին մասնակցել է 30 ուղղակի շահառու: Քննության փուլը հաջողությամբ ավարտած մասնակիցները անցել են վեցշաբաթյա պրակտիկա մարքեթինգի և հարակից ոլորտների 6 կազմակերպությունում:

Արշավի շրջանակում մշակված մոդելը պրակտիկայի անցկացման ճիշտ մոդելավորված և փորձարկված գործողությունների փաթեթ է, որը տվյալ ոլորտում պրակտիկա կազմակերպող ընկերությունների համար կարող է դառնալ օրինակելի: Արշավային ծրագրի հաջողված մոդելը սկսել է կիրառել թվային շուկայավարման ոլորտում պրակտիկա կազմակերպող կազմակերպությունների առնվազն 30%-ը: Այն դարձել է լավ օրինակ պատկան մարմինների համար և ազդակ՝ մոբիլիզացվելու, իրական խնդիրներին առերեսվելու և լուծման ուղիներ գտնելու համար:

Արշավային ծրագրի արդյունքում որակավորվել են թվային մարքեթինգի մասնագետներ, ովքեր զինված են տեսական և պրակտիկ գիտելիքներով: Բարձրացել է ծրագրին մասնակցած Քովիդի հետևանքով գործազուրկ դարձած HoReCa և տուրիզմ ոլորտի երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում, իսկ Չբաղվածության ապահովման առումով՝ շահառուների առնվազն 50%-ն աշխատանք է գտել նոր մասնագիտությամբ:

«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ

Համայնքային համախմբում՝ հանուն թափանցիկ եւ մասնակցային տեղական ինքնակառավարման

Համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հոդված 11-ի՝ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարման



գործընթացներում սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

Այս տեսանկյունից Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԾԾ) այն կարենորագույն փաստաթուղթն է, որը պետք է կազմվի՝ հենվելով համայնքների կարիքների ներքին գնահատման եւ հանրային բաց լուսմների կազմակերպման վրա: Չնայած օրենքի պահանջին՝ իջեւանում բնակիչների եւ հատկապես երիտասարդների՝ որպես առավել խոցելի խմբի մասնակցությունը քաղաքականությունների եւ համայնքի զարգացման ռազմավարական փաստաթղթերի աշխատանքներում շարունակում էր մնալ ցածր մակարդակի վրա, ինչի արդյունքում կազմված ծրագրերն իրենց բովանդակությամբ մասնակի էին արտահայտում համայնքի իրական կարիքները, ինչպես օրինակ նախորդ՝ 2017-2021թթ. ՀՀԾԾ-ն:

Վերը նշված խնդիրները հաշվի առնելով՝ «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ-ն 2021թ. նախաձեռնեց ջատագովության արշավ, որն ուղղված էր տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներում հանրային մասնակցության խթանմանը: Ջատագովության արշավի վերջնականատակը իջեւանի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի մշակման աշխատանքներում հանրային մասնակցության խթանումն էր, որի արդյունքում համայնքի տարբեր շահագրգիռ կողմերը հնարավորություն կունենան ներգրավվել որոշումների կայացման գործընթացում եւ բարձրաձայնել համայնքի զարգացման վերաբերյալ իրենց դիրքորոշումները:

Ջատագովության շրջանակում կիրառված գործիքակազմը հնարավորություն է տվել իրականացնել ինչպես մշտադիտարկման, օրենքի թերի կատարման կամ չկատարման դեպքերի բացահայտման, այնպես էլ դրանց հանրայնացման եւ շահերի պաշտպանության աշխատանքներ:

Իրականացրած արշավի արդյունքում խոշորացված իջեւան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները **մշակել են իջեւանի 2022-2027թ. հնգամյա զարգացման ծրագիրը**՝ պահպանելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր նորմերը: Փաստաթղթի մշակման աշխատանքներում համայնքի բնակիչների եւ առհասարակ, շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցության ապահովման համար՝ համայնքային իշխանությունները մեծապես օգտվեցին եւ կիրառեցին մասնակցության մեխանիզմների վերաբերյալ բոլոր այն առաջարկությունները, որոնք ներկայացրել էր «Քաղաքացիական երիտասարդական կենտրոն» համայնքային զարգացման ՀԿ-ն: Բացի այդ, կազմակերպությունը համայնքային իշխանությունների առաջարկությամբ ներգրավվեց փաստաթղթի մշակման համար ձեւավորված խորհրդակցական մարմնում՝ փորձագիտական խորհրդատվություն ցուցաբերելու եւ աջակցելու նպատակով:

«Ուղղակի ժողովրդավարություն» ԶԳ



Ուղղակի
Ժողովրդավարություն

Ձաքագում ներքին ռեսուրսներով

Լոռու մարզի համայնքներում առկա են բազմաթիվ խնդիրներ՝ հանքերի ու հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ)-ի անվտանգ շահագործման, շրջակա միջավայրի պահպանման, համայնքին հատկացվող գույքահարկերի գանձման, պարտավորվածությունների կատարման և վերանայման վերաբերյալ: Այդ իրավիճակում «Ուղղակի ժողովրդավարություն» ԶԳ-ն չափազանց կարևոր համարեց բարձացնել երիտասարդների ներգրավածությունը համայնքային գործընթացներում, օգնել իրենց ինքնակազմակերպվել որոշումներ կայացնելու գործընթացում, խթանել հանրային մասնակցության և հանրային շահի պաշտպանության դերի բարձացմանը:

Լոռու մարզի 7 խոշորացված համայնքի 16 բնակավայրի ներկայացուցիչ երիտասարդների մասնակցությամբ իրականացվել է աշխատաժողով ու վեր հանվել առաջնային խնդիրները: Բացի այդ, մշակվել են հարցաթերթեր և անցկացվել է հետազոտություն, որը նույնպես նպատակ ուներ ի հայտ բերել առկա խնդիրները, ինչպես նաև նպաստել այդ համայնքներում խնդիրների բարձրաձայնմանը, բնակչության՝ համայնքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի գնահատմանը և խնդիրների լուծման ուղիների վեր հանելուն:

Արշավային ծրագրի իրականացման ընթացքում «Ուղղակի ժողովրդավարություն» ԶԳ-ն մոբիլիզացրել է Լոռու մարզի տարբեր համայնքներում բնակվող երիտասարդներին, որոնց հետ կնքվել են հետագա երկարաժամկետ համագործակցության հուշագրեր: Ծրագրային թիմը հանդիպում է իրականացրել Լոռու մարզպետի հետ, քննարկել առաջնային խնդիրները, որից հետո մարզպետին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվել է նաև կազմակերպության ներկայացուցիչը՝ ծրագրի համակարգողը:

Աշխատանքներ են իրականացվել նաև համայնքներում ավագանու անդամների հետ: Օրինակ՝ Գոգարան բնակավայրում նախատեսված հանքարդյունաբերական նպատակներով իրականացվելիք հետախուզական աշխատանքների իրականացման թույլտվության համար կազմակերպած հանրային լուծման շրջանակում ակտիվ աշխատանք է իրականացվել Սպիտակի ավագանու անդամների հետ, որի արդյունքում բնակիչների և ավագանու անդամների կողմից թույլ չի տրվել հանքարդյունաբերական աշխատանքների իրականացումը:

«ՄԻՏՔ» երիտասարդական-կրթական նախաձեռնություն 34

Արմավիրի երիտասարդ դեսպաններ. խթանելով մասնակցային մշակույթը հանուն բարեփոխումների



Համաձայն ՀՀ-ում կատարված հետազոտությունների՝ արձանագրված է երիտասարդների՝ հասարակական-քաղաքական կյանքի, ինչպես նաև մարզային ու համայնքային կառավարման մասնակցայնության ցածր մակարդակ: Այս խնդիրը բխում է երիտասարդների անտարբեր վերաբերմունքից և հասարակական-քաղաքական գործընթացների շուրջ ձևավորված անվստահության մթնոլորտից: Վերոնշյալ խնդիրն առավել մեծ խորությամբ է դրսևորվում ՀՀ մարզերում՝ ելնելով տնտեսական, հաղորդակցային, ենթակառուցվածքային, կրթական և այլ ոլորտների՝ մայրաքաղաքի համեմատ ոչ համաչափ զարգացվածությունից: Նույն խնդիրը երևանին մոտ մարզերում ևս դրսևորվում է ցայտուն կերպով, քանի որ մայրաքաղաքը դառնում է աշխատանքի և ինքնադրսևորման հիմնական վայրը, իսկ սեփական համայնքները շատ հաճախ ծառայում են պարզապես գիշերակացի վայրեր:

Խնդրի պատճառներից է նաև այն, որ որոշումներ կայացնող մարմինները բավարար չափով ներառական չեն, քանի որ երիտասարդների մասնակցությունը խթանելու համար ոչ միայն անհրաժեշտ մակարդակով քայլեր չեն ձեռնարկում, այլ նաև եվրոպական խարտիայով ու պետական քաղաքականությամբ նախատեսված մասնակցայնության մեխանիզմները՝ երիտասարդական խորհուրդների և կից մարմինների գործունեությունը, շատ հաճախ կազմակերպում են ձևական տարբերակով կամ դրանք գոյություն ունեն միայն թղթի վրա: Սրանից զատ՝ երիտասարդական ՀԿ-ներին և նախաձեռնություններին տրվող բյուջետային հատկացումները մեծամասամբ ևս անբավարար են կամ չկան: Այս խնդիրների բարձաձայնման ու լուծման նպատակով «ՄԻՏՔ» ՀԿ-ն իրականացրել է «Արմավիրի երիտասարդ դեսպաններ. խթանելով մասնակցային մշակույթը հանուն բարեփոխումների» հանրային արշավը, որի արդյունքում՝

- ✓ Իրականացրել է «Արմավիրի մարզի երիտասարդների խնդիրները և հասարակական, քաղաքական ակտիվության մակարդակը» հետազոտություն
- ✓ Ձևավորել է Արմավիրի երիտասարդ դեսպանների 20 անձանց թիմ, համայնքների հետ հուշագրեր կնքել՝ համայնքային խնդիրների լուծման նպատակով
- ✓ Ձևավորվել է դեսպանների կողմից մոբիլիզացված 60 երիտասարդից կազմված թիմ. նրանք ներկայացնում են Արմավիրի տարբեր համայնքները, ունեն երիտասարդական/համայնքային ծրագրերի մասնակցության տարբեր փորձառություններ
- ✓ Ամրապնդվել են գործընկերային կապեր՝ մարզային պետական ու հասարակական մարմինների հետ



Կնքվել են համագործակցության հուշագրեր՝ համայնքների ղեկավարների հետ և մշակվել խնդիրների լուծման շուրջ գործողություններ ու ձեռք բերվել պայմանավորվածություններ: Մասնավորապես՝ Խանջյան, Բագարյան, Երվանդաշատ, Չարթոնք, Լուկաշին համայնքների հետ ձեռք են բերվել համագործակցության ֆորմալ հուշագրեր և Արմավիրի, Բաղրամյանի, Մեծամորի խոշորացված համայնքների հետ՝ համագործակցության պայմանավորվածություններ



Պատրաստվել է [«Ինչպե՞ս հասնել վարքագծային փոփոխությունների երիտասարդների շրջանում. Արմավիրի երիտասարդ ղեսպանների օրինակով»](#) մոդելային ուղեցույցը, որը միտված է օգնելու երիտասարդական կազմակերպություններին, նախաձեռնություններին, երիտասարդական աշխատողներին և բոլոր նրանց, ովքեր ցանկանում են վարքագծային և վերաբերմունքային փոփոխությունների հասնել երիտասարդների շրջանում

«Ռեստարտ Գյումրի» ՀԿ

Ավագ դպրոցների աշակերտների և քոլեջների ուսանողների փորձի փոխանակման և հզորացման արշավ



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային երիտասարդները չունեն միմյանց հետ հաղորդակցվելու և միջհամայնքային երիտասարդների հետ ծրագրերին մասնակցելու հնարավորություն, պասիվ են որոշումների կայացման գործընթացներում և ունեն հանրային իրազեկման կարիք՝ «Ռեստարտ Գյումրի» կազմակերպությունը կարևորեց արշավային ծրագիր անցկացնելու գաղափարը՝ միավորելով Շիրակի մարզի երեք տարբեր համայնքների երիտասարդներին՝ դպրոցականներին և քոլեջների ուսանողներին՝ իրենց փորձի փոխանակման և կարողությունների զարգացման նպատակով:

- ✓ Արշավի արդյունքում համայնքների երիտասարդների շրջանում բարձրացավ ժողովրդավարության վերաբերյալ իրազեկվածությունը, որը արտահայտվում է նրանց կողմից իրականացված աշխատանքներում, մեդիաաշխատանքներում և նախաձեռնություններում
- ✓ Համայնքային երիտասարդների ներգրավվածության բարձրացում՝ համայնքային խնդիրների լուծման համատեքստում. արշավի մասնակիցները ակտիվորեն հետևում և մասնակցում են Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) աշխատանքներին
- ✓ Թիրախավորված երիտասարդների գրագիտության մակարդակի և մեդիա գրագիտության բարձրացում/հմտությունների ու կարողությունների զարգացում. արշավի սկզբնական փուլում տեղի ունեցած դասընթացները և այնուհետև հետ- արշավային աշխատանքները, մեդիաաշխատանքները մեծապես դրականորեն են ազդել երիտասարդների գրագիտության և մեդիագրագիտության մակարդակի բարձրացման վրա
- ✓ Համայնքային խնդիրների բացահայտում, վերհանում և ներկայացում. վերհանված խնդիրների հնարավոր լուծումների մշակում

Կազմակերպած արշավի արդյունքում համայնքային մասնակիցները սկսեցին ավելի մեծ հետաքրքրություն դրսևորել համայնքապատկան կառույցների և ՏԻՄ-ի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետ կատարման ուղղությամբ՝ փորձելով առաջին հերթին տեղեկանալ իրականացվող աշխատանքների և դրանց արդյունավետության վերաբերյալ հարցերին, այնուհետև որոշում կայացնել աջակցելու և ըստ անհրաժեշտության մասնակիցը դառնալու համայնքային զարգացման ծրագրերին՝ ըստ անհրաժեշտության:

Արշավի մասնակից երիտասարդների կարողությունների և հմտությունների զարգացման արդյունքում ներկայումս այս երեք համայնքում ձևավորվել է առավել ակտիվ և դրական փոփոխություններին պատրաստ երտասարդական կորիզ, ինչը դրականորեն է անդրադառնում համայնքների հետագա զարգացման վրա: Բացի այդ, ստեղծվել են մեդիա հարթակներ, ֆեյսբուքյան խմբեր, որոնք միավորում են Գյումրու, Արթիկի և Ամասիայի համայնքային ուսումնական հաստատություններում սովորող հարյուրավոր երիտասարդներին և նպաստում են նրանց միջև հաղորդակցության և համագործակցության զարգացմանը:

Արդյունքում, Արթիկի թիմի մենթորը մասնակցել է Արթիկ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններին և ստացել մանդատ:

«Ինթերա» հոգեբանական ակումբ ՀԿ

Դաձրու աշխատավայրդ ապահով միջավայր՝ պահպանելով խտրականությունից զերծ լինելու քո իրավունքը

Աշխատանքի իրավունքը մեր օրերում դարձել է ամենախոցելի և չպաշտպանված իրավունքը: Այդ է պատճառը, որ շատ հաճախ աշխատանքի իրավունքի սահմանափակման կամ դրա սպառնալիքով մարդուն ստիպում են հրաժարվել իր այլ իրավունքների՝ հավաքների ազատության, միավորվելու, կարծիք հայտնելու, ընտրական և այլ իրավունքների իրացումից:



Մոբբինգը հայտնի է որպես աշխատավայրում հոգեբանական հետապնդում: Տեղի է ունենում աշխատանքի ժամանակ, երբ մեկ կամ մի քանի անհատներ համակարգված և պարբերաբար հոգեբանական բռնություն են գործադրում մեկ այլ անհատի նկատմամբ: Մոբբինգը կարող է լինել աշխատակիցների միջև՝ սկսած աշխատակիցներից մինչև վերադաս, վերադասից մինչև աշխատողներ կամ կազմակերպությունից մինչև իր աշխատողներից մեկը: Մոբբինգը ոչ միայն ազդում է աշխատանքի կատարման վրա և լուրջ հակասություններ է առաջացնում, այլև կարող է լուրջ հոգեբանական խնդիրներ առաջացնել այն վերապրող մարդու մոտ:

Աշխատանքային օրենսգրքում բացակայում է մոբբինգ տերմինի գործածությունն ու բացատրությունը, որն իր հերթին հանգեցնում է աշխատավայրերում դրա լատենտային դրսևորումներին՝ թույլ չտալով վերապրողին գտնել պետության կողմից համապատասխան պաշտպանության միջոցներ: Երևույթն իր բնույթով դժվար ապացուցելի է և համապատասխան խորը մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն կա: Վերը նշված խնդրին է անդրադարձել «Ինթերա» հոգեբանական ակումբ ՀԿ-ն՝ իրականացնելով «Դաձրու աշխատավայրդ ապահով միջավայր՝ պահպանելով խտրականությունից զերծ լինելու քո իրավունքը» արշավը, որի նպատակն է նպաստել Շիրակի մարզի աշխատավայրերում հոգեբանական բնույթի, հետապնդումների՝ մոբբինգի կանխարգելմանը՝ թիրախավորված անձանց տրամադրելով համապատասխան պաշտպանության մեխանիզմներ: Արշավի շրջանակում 1000 աշխատակցի և գործատուների շրջանում իրականացվել է [հետազոտություն](#)՝ վեր հանելու աշխատավայրերում մոբբինգի առկայությունը, դրսևորման ձևերը և թիրախավորված անձանց խնդիրները: Հարցվածների 45.90 %-ը պատասխանել է, որ աշխատավայրում ականատես է եղել բռնության դեպքերի:

Արշավի ընթացքում իրականացվել է լայնածավալ իրազեկում Շիրակի մարզում այցերի միջոցով, որոնց շրջանակում 367 աշխատակից իրազեկվել է մոբբինգի երևույթի և ստեղծված թեժ գիծ ծառայության վերաբերյալ: Հաշվի առնելով բազմաթիվ առաջարկություններ՝ դասընթացը կազմակերպվել է նաև Շիրակի մարզի Ոսկեհասկ, Մեծ Մանթաշ և Արթիկ համայնքի աշխատակիցների համար:

Շիրակի մարզի 20 կառույցի 307 աշխատակից և 30 գործատու մասնակցել են «Հուզական ինտելեկտի մակարդակի բարձրացումը որպես մոբբինգի կանխարգելման միջոց» դասընթացին:

Արշավի շրջանակում պատրաստվել է նաև ուսուցողական [սոցիալական հոյովակ](#), որը լավագույնս իրազեկում է հասարակությանը մոբբինգ երևույթի վերաբերյալ:

«Առողջապահության քաղաքականության եւ նորարարության կենտրոն» ՀԿ

Առողջության անվճար սբրինինգային ծրագրի խթանում Երեւանի օրինակով

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ոչ վարակիչ հիվանդությունները (ՈՎՀ) տարեկան խլում են ավելի քան 41 միլիոն մարդու կյանք, ինչը կազմում է աշխարհում մահացությունների 71%-ը:



ՈՎՀ-ներն ունեն ռիսկի գործոններ, որոնց վրա ներազդելով՝ հնարավոր է կանխարգելել ՈՎՀ զարգացումը: Այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն ունի դրանց վաղ հայտնաբերումը: Օրինակ՝ չարորակ նորագոյացություններով (ՉՆ) պացիենտների ապրելիության ցուցանիշը մեծապես կապակցված է հիվանդության վաղ փուլերում հայտնաբերմամբ: Ցավալի է նշել, որ ՉՆ գրեթե ամեն երկրորդ դեպքը հայտնաբերվում է հիվանդության 3-րդ և 4-րդ փուլերում՝ երբ բուժումը պակաս արդյունավետ է, քան հիվանդության ավելի վաղ փուլերում: 2020թ-ի տվյալներով՝ հիվանդության վաղ շրջանում, այսինքն 1-ին և 2-րդ փուլում հայտնաբերված բոլոր տեսակի ՉՆ մասնաբաժինը կազմել է 42%, իսկ 3-րդ և 4-րդ փուլերում՝ 58%:

Կանխարգելիչ բժշկական ծառայությունների թվին են պատկանում նաև պետության կողմից երաշխավորված առողջության սբրինինգային ծառայությունները: Չնայած նրան, որ սբրինինգների ծրագիրը գործում է 2015թ-ից, այնուամենայնիվ բնակչության քիչ տոկոսն է դրանց դիմում:

Մի շարք կանխարգելիչ ծառայությունների համար հասարակության մեջ կան տաբուներ, օրինակ արգանդի վզիկի քաղցկեղի հետազոտությունը: Միաժամանակ, առողջության սբրինինգների ոչ լայն տարածվածության պատճառն այն է, որ պացիենտները չգիտեն՝ ինչ է լինելու հետազոտությունից հետո, չեն պատկերացնում ընթացակարգը, իրական անհրաժեշտությունը, ունեն շատ վախեր և գտնվում են անորոշ վիճակում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ-ն իրականացրել է «Առողջության անվճար սբրինինգային ծրագրի խթանում Երեւանի օրինակով» ծրագիրը, որի նպատակն է հանրությանը տրամադրել հավաստի և մատչելի տեղեկատվություն սբրինինգների և դրանց անհրաժեշտության վերաբերյալ՝ սբրինինգների դիմելիությունը բարձրացնելու նպատակով:

Ծրագիրը մեկնարկել է հետազոտության իրականացմամբ, որի շրջանակում ձեռք բերված տվյալների հիման վրա կառուցվել է ծրագրի հետագա ռազմավարությունը: Հետազոտությունը ցույց է տվել, որ սբրինինգներին չդիմելու հիմնական պատճառներից մեկը իրազեկվածության բացն է: Դա հիմք ընդունելով՝ նկարահանվել է 4 տեղեկատվական հոլովակ, որոնք ներկայացվել են որոշ բժշկական ծառայությունների վերաբերյալ հանրության կարծրատիպերը կոտրելու և հավաստի տեղեկատվության տրամադրման նպատակով:

Տեսահոլովակներին ի պատասխան, ստացվել են մի շարք արձագանքներ այն մասին, թե որքան օգտակար են եղել դրանք և խթան են հանդիսացել, որպեսզի մարդիկ դիմեն կանխարգելիչ հետազոտությունների:

Միաժամանակ, արշավային ծրագրի շրջանակում ակտիվ համագործակցություն է իրականացվել ինստագրամյան կարծիք ձևավորողների (ինֆլյուենսերների) հետ: Վերջիններս իրենց հարթակներից պարբերաբար խոսել են կանխարգելիչ հետազոտությունների և սբրինինգների

մասին, իրականացրել են ուղիղ եթեր քննարկում մասնագետների հետ, իրենց օրինակով կամ մարաթոնների կազմակերպման միջոցով հորդորել են մարդկանց իրականացնել կանխարգելիչ հետազոտություններ:

Ծրագրի շրջանակում պատրաստվել է 4 տեղեկատվական թերթիկ հետևյալ թեմաներով՝

✓ Արգանդի պարանոցի քաղցկեղ

✓ Շաքարային դիաբետ

✓ Կրծքագեղձի քաղցկեղ

✓ Չարկերակային հիպերտենզիա

Իրականացվել է նաև ֆեյսբուքյան ուղիղ եթեր բժիշկ մասնագետի հետ, որտեղ ներկայացվել է կանխարգելիչ բժշկական օգնության կարևորությունը, տարբեր, ոչ վարակիչ հիվանդությունների ախտանիշները ու վերջիններիս վաղ հայտնաբերման ու կանխարգելման եղանակները:

Ծրագրի ավարտից հետո էլ «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՔՀԿ-ն ստանում է բազմաթիվ արձագանքներ, որտեղ մարդիկ պատմում են, թե ինչպես են այս ծրագրի շնորհիվ դիմել հետազոտության, վաղաժամ հայտնաբերել հիվանդությունը և համապատասխան միջոցներ ձեռնարկել:

«Կետ 33» ՀԿ

Հարմարավետ միջավայր վաղ մայրության շրջանում գտնվող կանանց համար

Հայաստանում կանայք հաճախ կանգնում են երկընտրանքի առաջ՝ կորցնելով եկամուտն ու կարիերայի աճը, թե՛ զոհաբերել երեխայի պատշաճ խնամքն ու ոտնահարել փոքրիկի՝ կրծքով կերակրվելու իրավունքը:



«Ամուսնական զույգերի դեպքում ավելի քիչ են մայրերի զբաղվածության դեպքերը, հատկապես երիտասարդ, վերարտադրողական տարիքում և, հետևաբար ավելի մեծ՝ զբաղվածության գենդերային խզվածքը»: Վիճակագրության կոմիտեի [հետազոտության](#) մեջ նշվում է նաև գենդերային խզվածքի չափը՝ 40%: Հետաքրքրական են նաև այն [տվյալները](#), որ տարեկան միջինում ծնող 35 000 երեխայի ընտանիքից երեխայի խնամքի նպաստ է հատկացվում միջինում 13 000-ին, այսինքն կարելի է ենթադրել, որ շուրջ 22 000 նորածնի մայրերը չեն աշխատում: Իսկ տարեկան շուրջ 13 000 աշխատող առնվազն ժամանակավորապես դուրս է գալիս աշխատաշուկայից: Սա աշխատաշուկայի գենդերային խզվածքի պատճառներից մեկն է:

Արշավային ծրագիր իրականացնելով՝ «Կետ 33» կազմակերպությունը նախատեսել է փոփոխություն բերել վաղ մայրության շրջանում գտնվող և աշխատող մայրերի պայմանների բարելավման հարցում՝ նպաստելով օրենսդրական բարեփոխումների կատարմանը և այդ գործընթացի ջատագովությանը:

Արշավի ընթացքում որպես առաջնահերթ խնդիր դիտարկվել է մինչև 2 տարեկան երեխա ունեցող և աշխատող մայրերի՝ կրծքով կերակրելու իրավունքի իրացման և աշխատանք-ընտանիք բալանսավորման հարցերը:

Ծրագրի շրջանակում իրականացվել է աշխատավայրերում ընտանիքամետ միջավայր ունենալու և ընտանիք-աշխատանք բալանսն ապահովելու վերաբերյալ միջազգային և տեղական փորձի ուսումնասիրություն, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում կազմվել է առաջարկությունների փաթեթ, որը փոխանցվել է կառավարությանը՝ մասնավորապես Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին:

Հանդիպումներ են եղել Աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարության, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի, UNFPA Armenia, UNICEF, «Մադամ» կին գործարարների միության ներկայացուցիչների, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ՝ ներկայացվող օրենսդրական փոփոխությունների առաջարկություններն ու դրանց հիմնավորումները քննարկելու նպատակով:

ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամները պատրաստակամություն են հայտնել համագործակցել «Կետ 33» ՀԿ հետ՝ մայրության վաղ շրջանում գտնվող կանանց՝ կրծքով կերակրման համար աշխատանքային հարմարավետ միջավայրի ստեղծման օրենսդրական կարգավորումների շուրջ:

Ծրագրի շնորհիվ գործարկվել է կազմակերպության [կայքը](#) և ստեղծվել են նաև նորարարական մեդիա պրոդուկտներ (տեսախոսեր, նկարազարդումներ, ֆոտոպատմություններ, ինֆոգրաֆիկաներ և այլն):

«Հանուն Ազատության» ԻՅԿ

Մենք կարող ենք

«Մենք կարող ենք» արշավի նպատակն է՝ բարելավել պատժից դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացին ուղղված հողվածները՝ մասնավորապես գնահատման բալային համակարգի, դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ ազատման դիմումների քննման ժամկետների հետ կապված իրավիճակը:



«Հանուն Ազատության» ԻՅԿ-ն սոցիալոգումներ է անցկացրել 150 անձանց հետ՝ ինչպես նախկին և ներկա դատապարտյալների, այնպես էլ նրանց հարազատների հետ, մշակել է [հետազոտություն](#)՝ Հայաստանում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգի վերաբերյալ:

Մասնագիտական փորձագիտական խումբն աշխատել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ընթացակարգում փոփոխություններ կատարելու նախագծի վրա, հաշվի են առնվել շահառուների առաջարկները: Հետազոտության մաս կազմող նախագիծը (Հոդված 5) դրվել է հանրային քննարկման, լրացվել է ու բերվել վերջնական տեսքի: Այն հասանելի է «Հանուն Ազատության» ԻՅԿ-ի [կայքում](#), տպագրվել եւ ուղարկվել է շահագրգիռ կողմերին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, քրեակատարողական եւ պրոբացիայի ծառայություններին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ Աժ պետաիրավական, մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովներին, Մարդու իրավունքների պաշտպանին: Նախագիծն արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունից հետո կդրվի շրջանառության մեջ: «Հանուն Ազատության» ԻՅԿ-ն ծրագրում է իր գործողություններով նպաստել նախագծի ընդունմանը:

Առաջարկվող փոփոխությունների մասին տեղեկատվությունը տարածվել է նաև Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց շրջանում: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներում փակցվել են պաստառներ, որտեղ նշված է «Հանուն Ազատության» ԻՅԿ-ի կոնսակտային տվյալները, որպեսզի անհրաժեշտության դեպքում պատիժ կրող անձինք կարողանան արագ կապ հաստատել ԹՀԿ-ի աշխատակիցների հետ:

Համագործակցության հուշագիր է կնքվել ՀՀ արդարադատության պրոբացիայի ծառայության հետ, որտեղ հաշվառված շահառուների հետ կազմակերպվում են իրազեկման հանդիպումներ, աշխատանքներ են տարվում շահառուների զբաղվածության հարցը լուծելու ուղղությամբ:

«Բազմազանություն» ՀԿ

Նպաստել խտրականության նվազեցմանը Հայաստանում

Հայաստանում, խախտելով մարդու իրավունքները, խոցելի ու թիրախավորված խմբերը՝ ԳՔՏԶ+ անձինք (գեյ, բիսեքսուալ, տրանս, քվիր), հաշմանդամություն ունեցող, կամ հակամշակույթի ու ենթամշակույթի պատկանող անձինք երբեմն խտրականության են ենթարկվում նախազորակոչի ընթացքում: Եվ այդ խտրականության, իրավունքների խախտումների դեպքերի մասին առկա չէին համապատասխան ուսումնասիրություններ, զեկույցներ և այլ տեղեկատվական նյութեր, որոնց իրականացման միջոցով զորակոչային գործընթացները մշտադիտարկման կենթարկվեին: Այս նպատակով «Բազմազանություն» ՀԿ-ն անց է կացրել հետազոտություն և իրականացրել տեղեկատվական նյութերի հանրայնացում:



«Բազմազանություն» ՀԿ-ն, մշտադիտարկման ենթարկելով զորակոչերը՝ սկսած 2018 թվականի ամառային զորակոչերից մինչև 2021 թվականինը, դաշտային աշխատանքների միջոցով իրականացրել է հետազոտություն, որի արդյունքում հրապարակել է «Չորակոչիկների նկատմամբ խտրականության դրսևորումները բժշկական փորձաքննությունների ընթացքում» իրավական [զեկույց](#):

Ուսումնասիրությունների ու վեր հանված կարիքների արդյունքում պատրաստվել է նաև «Նախազորակոչային ու զորակոչային տարիքի խոցելի ու թիրախավորված քաղաքացիների» համար ձեռնարկ, որը հասանելի է «Բազմազանություն» ՀԿ-ի [կայքում](#):

Իրականացվել է նաև վերապատրաստում խոցելի ու թիրախավորված զորակոչային տարիքի քաղաքացիների համար, ինչպես նաև հոգեկան առողջության կենտրոնների այն աշխատակիցների համար, որոնք ներգրավված են զորակոչային բժշկական հանձնաժողովի կազմում:

Հաշվի առնելով ծրագրի երկարաժամկետ ջատագովության նպատակը, որն է՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի առկայության անհրաժեշտությունը, «Բազմազանություն» ՀԿ-ն պատրաստել է նաև տեղեկատվական [տեսանյութ](#) օրենքի անհրաժեշտության մասին՝ «Խտրականության կանխարգելման օրենսդրական կարգավորումներն ու բացերը ՀՀ-ում | 2021» խորագրով:

«Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀՀ

Հետպատերազմյան վերականգման և սոցիալական քաղաքականության բարելավման ուղիները

Կոնֆլիկտային իրավիճակը փոխում է մարդկանց կենսակերպը, իսկ պատերազմի ընթացքում առավել խոցելի են կանայք և երեխաները: Խնդիրներն ավելի ակնառու են հատկապես, երբ խոցելիության տարբեր գործոնները միաժամանակ են հանդես գալիս, ինչպես օրինակ՝ առողջական խնդիրները, լրացուցիչ կարիքները, հաշմանդամությունը և այլն: Պատերազմը և կոնֆլիկտային, լարված իրավիճակները ենթադրում են նոր իրողություն, նոր պահանջներ և կարիքներ, որոնց կանխարգելմանը և միջամտությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ պետք է իրականացվեն յուրաքանչյուր պետության կողմից: Արշավի նպատակն էր բացահայտել այս բոլոր կարիքները հետազոտության շնորհիվ և այդ կարիքները հասցնել որոշում կայացնողներին, որպեսզի պետության հետպատերազմյան սոցիալական քաղաքականությունը լինի առավել կարիքահեն և թիրախային:



Resource Center for
Women's Empowerment

Արշավային ծրագիրը բաղկացած էր երկու հիմնական մասից՝ հետազոտություն և բուն արշավ՝ ջատագովության փուլ: Ուսումնասիրվել է ՀՀ հետպատերազմյան քաղաքականությունն ու իրականացվող աջակցության ծրագրերը, այլ երկրների փորձը հետպատերազմյան ճգնաժամային իրավիճակներում: Արդյունքների վերլուծության հիման վրա կազմվել է զեկույց, որտեղ հաշվի է առնվել շահագրգիռ կողմերի կարծիքները: Չեկույցը երեք ամսվա ընթացքում ներկայացվել է լայն հանրությանը տարբեր վիզուալ նյութերի միջոցով սոցիալական ցանցերում, ուղարկվել է շահագրգիռ հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև ՀՀ ԱԺ ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ): 2021թ. դեկտեմբերին կազմակերպությունը հնարավորություն է ունեցել զեկույցի կարևոր առաջարկները ներկայացնել ԱՍՀՆ նախարարին ՀՀ-ում Արցախի օպերատիվ շտաբի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկմանը և ներկայացրել հետազոտության արդյունքները:



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

